ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 3, 1957 Общественные науки

Վ. Ոսկանյան

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՌՈՒՍԱԿԱՆ ՕՐԻԵՆՏԱՑԻԱՅԻ ՀԱՐՑԸ ՄԻՆՉՍՈՎԵՏԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Սովետահայ պատմագրությունը տասնյակ տարիների ընթացքում ստեղծել է հայ-ռուսական հարաբերություններին նվիրված աշխատությունների բավական պատկառելի գրադարան։ Երեթե բոլոր պատմաբանները այս կամ այն կապակցությամբ անդրադարձել են այդ պրոբլեմին կամ դրել հատուկ աշխատություններ տարբեր շրջանների ու տարբեր խնդիրների վերաբերյալ և ցույց տվել ռուսական օրիենտացիայի և Հայաստանը Ռուսաստանին միացնելու պրոգրեսիվ ու փրկարար նշանակությունը։

Սակայն հայ ժողովրդի դեպի Ռուսաստան կողմնորոշվելու ժամանակի, ինչպես և ռուսական օրիենտացիայի էությանն առնչվող մի շարք հարցեր մինչև օրս վիճելի են ու կարոտ բազմակողմանի գիտական փաստարկման ու մարքսիստական լուսաբանության։

Նախ և առաջ պետք է ճշտել «հայերի ռուսական օրիենտացիա» արտահայտության իմաստը, պայմանավորվել նրա էության, բնույթի մասին, ապա ցույց տալ ու հիմնավորել այդ օրիենտացիայի սոցիալ-տնտեսական ու դասակարգային հիմքերը և պատմա-աշխարհագրական շրջանակները։ Առանց այդ հասկացողությունների ճշտման հարցում որոշակի պայմանավորվածության ու փոխադարձ ըմբռնման, պատմաբանները ի վիճակի չեն լինի գիտական վեճը դնել նորմալ հունի մեջ և իրենց ասելիքը հասկանալի դարձնել ընթերցողներին։

Հայ ազատագրական շարժման ռուսական օրիենտացիա *ասելով պետք է հասկանալ թուրք-պարսկական տիրապետությունից ազատվելու համար մղվող պայքարում Ռուսաստանի օգնության վճռական դերի և անհրաժեշտության ճանաչելն ու նրանով ղեկավարվելը։*

Արևելքի երկու զորեղ պետությունների միջև բաժանված, պետականությունից, զորքից ու զենքից զրկված հայ ժողովուրդը իր ազատագրության հույսը կարող էր կապել միայն հզոր հարևանի՝ Ռուսաստանի օգնության հետ։

16—17-րդ դարերում Ռուսաստանը պաշտպանվում էր սուլթանի ու շահի և սրանց վասալների ագրեսիայից, միաժամանակ ամրապնդելով ու դեպի հարավ շարժելով իր սահմանները։ 18—19-րդ դարերում ուժեղացած ցարական Ռուսաստանի հարձակողական պատերազմները Թուրքիայի ու Պարսկաստանի դեմ խարխլում էին այդ բռնապետությունների հիմքերը Անդրկովկասում։ Ստեղծված պատմական պայմանները օբյեկտիվորեն օգնում էին ժողովուրդների ազատագրական պայքարին, նպաստելով հայերի ռուսական օրիենտացիայի հետագա ամրապնդմանը։ Դարավոր տնտեսական ու կուլտուրական կապերը, օտար տիրողների դեմ համատեղ պայքարի անհրաժեշտությունը և պատմական բարեկամության տրադիցիաները հանդիսանում էին այն ֆակտորները, որոնք ստեղծեցին, ամրապնդեցին ու հաղթանակի հասցրին ռուսական օրիենտացիան ազատագրական շարժման մեջ։

Եթե Ռուսաստանի շահերը պահանջում էին իր հարավային սահմանների ամրացման համար մշտական պայքար մղել թուրքական-թաթարական և պարսկական ագրեսիայի դեմ ու օգնել նույն ագրեսիայի և ագրեսիվ ուժերի տիրապետության դեմ պայքարող անդրկովկասյան ժողովուրդներին, եթե ցարիզմի նվաճողական քաղաքականությունը պահանջում էր խորտակել աշխարհակալ Թուրքիայի հզորությունը և թուրք-պարսկական տիրապետությունն Անդրկովկասում, ապա արևմտյան տերությունների տնտեսական ու քաղաքական օրադիրը պահանջում էր անդրկովկասյան շուկաներ թափանցելու համար լեզու գտնել Թուրքիայի հետ, կանգնեցնել Ռուսաստանի առաջխաղացումը և խեղդել Հայ և մյուս ժողովուրդների ազատագրական պայքարը։ Հայտնի է, որ Օտտոմանական կայսրությունում status quo-ի պահպանման արևմտաեվրոպական քաղաքականությունը նշանակում էր ստրկացված ժողովուրդների կեղեքման հավերժացում[1]։

Արևմտյան պետությունների նման քաղաքականությունը կարմիր թելի նման անցել է 18—20-րդ դարերի ողջ պատմության ընթացքում[2]։

Հայտնի է, որ անգամ Բիսմարկը նշում էր, թե Անգլիան և Ավստրիան Թուրքիայի տիրապետության պահպանումը դարձրել էին իրենց տրադիցիոն քաղաքականությունը[3]։

Ճիշտ է, եվրոպական պետությունները միջին դարերում պայքարել են թուրքական ագրեսիայի դեմ, փորձել են միավորել իրենց ուժերը և նույնիսկ ոտքի հանել թուրքական լծի տակ հեծող ժողովուրդներին, բայց այդ՝ միայն Թուրքիայի հզորության շրջանում, երբ ենիչերիների հարձակումը անմիջական վտանգ էր ստեղծել Ավստրիայի և եվրոպական մյուս պետությունների համար։ Մենք չենք կարող ժխտել նաև Եվրոպայի ու Ասիայի ժողովուրդների չափազանց բարեկամական վերաբերմունքը հայ դաղթականության նկատմամբ, նրանց դարավոր պայքարը Թուրքիայի լծի տակ տառապող ժողովուրդների ազատագրությանը նպաստելու համար։ Մեր ժողովուրդը երախտագիտությամբ հիշում է նրանց սրտարուխ ու կրքոտ բողոքը հայկական կոտորածների ու այլ բռնաղատությունների դեմ։ Սակայն մենք գիտենք, որ այդ բոլորը չփոխեցին ու չէին կարող փոխել ֆեոդալների, իսկ հետո կապիտալիստների կողմից թելադրվող արևելյան քաղաքականության հիմնական ուղղությունը 18—19-րդ դարերի ողջ ընթացքում։ Ճիշտ է, ազատագրական շարժման առանձին գործիչներ՝ վստահ ժողովուրդների անկեղծ բարեկամական զգացմունքների վրա և խափված քաղաքագետների մերենայություններից, «ֆրանկ» «խաչակիրների» օգնության հուսով ազատագրական պատրանքներ էին ստեղծում և իրենց երեսները դարձնում դեպի Եվրոպա։ Բայց այդ հիմք չի տալիս նման ձգտումներն ու փորձերը համարել հայերի «եվրոպական օրիենտացիայի» ապացույց։

Պատմական տարբեր ժամանակաշրջաններում Հայաստանի իշխող դասերը և դրանք ներկայացնող գործիչները երբեմն դիմել են նաև արևմտաեվրոպա-

[1] Տե՛ս *К. Маркс и Ф. Энгельс*, Сочинения, т. IX, стр. 393.

[2] *З. Т. Григорян*, Борьба Англии и Франции против освобождения Армении из под иранско-турецкого ига, „Вопросы истории", № 3, 1952. *А. Р. Иоаннисян*, Борьба Англии и Франции против присоединения Армении к России (*ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», հաս. գիտ., № 3, 1953*)։ Մ. Գ. Ներսիսյան, *Հայ ժողովրդի պայքարը թուրքական դեսպոտիզմի դեմ (հատկապես նայել «Ազատագրական շարժման ռուսական օրիենտացիան» գլուխը), Երևան, 1955*։

[3] *О. Бисмарк*, Мысли и воспоминания, т. II, М., 1940, стр. 238.

կան տերություններին կամ նրանց կոալիցիաներին, բայց դրանք եղել են էպիզոդիկ, կոնյուկտուրային ու ժամանակավոր փորձեր, որոնք չունենալով սոցիալ-տնտեսական ու քաղաքական ամուր հիմքեր, չէին կարող վերածվել հայ ժողովրդի ազատագրական ձգտումները Արևմուտքի հետ կապելու մշտական ու կայուն ծրագրի։ Պարզ է, որ ազատագրական պայքարում Ռուսաստանից օգնություն ստանալու ծրագիրը՝ հայերի ռուսական օրիենտացիան չի կարելի հավասար մակարդակի վրա դնել որևէ այլ պետության հետ քաղաքական գործարքի մեջ մտնելու և անգամ օգնություն հայցելու առանձին փաստերի հետ։

Առավել ևս անիմաստ կլինի այս ու այն իշխող դասի՝ օտար տիրողներին ենթարկվելը և հավատարիմ մնալը թուրքական կամ պարսկական օրիենտացիա համարելը։ Այս դեպքում մենք կարող ենք խոսել հնազանդության, հարմարվելու և կամ շահագործող շերտերի դավաճանության մասին։

Հայության բոլոր շերտերը և խմբերը, ավելի կամ պակաս ակտիվությամբ, արտահայտել են իրենց ռուսական օրիենտացիան։ Այդ վերաբերում է ինչպես արևելահայությանը, այնպես և արևմտահայությանը։ Մոսկվայի Պետական պատմական թանգարանում պահվող ձեռագիր նյութերը վկայում են, որ թուրքահայերը նույնպես Ռուսաստանի կողմն էին և իրենց պատրաստակամությունն էին հայտնում փոխադրվել Արևելյան Հայաստան։ Այդ տրամադրությունները հաստատում են վենետիկյան ուխտի միաբանները՝ իրենց Մոսկվա ուղարկած գրություններում[1]։ Այս կապակցությամբ վկայություն ունի (ավելի ուշ շրջանի վերաբերյալ) Մ. Նալբանդյանը. «Հայերը ամբողջ Թուրքիայում տրամադրված են Ռուսաստանի օգտին»[2],— գրում է նա։

Կարևոր է խորապես ուսումնասիրել և պատմական կոնկրետ իրադրության վերլուծությամբ ցույց տալ, թե ինչպես հասարակական տարբեր շերտեր տարբեր ձևով էին ըմբռնում ռուսական օրիենտացիան, յուրովի պատկերացնում շարժման նպատակները, հեռանկարները և Ռուսաստանի ուապագա հայկական պետության փոխհարաբերությունների հարցը։ Պարզ է, որ իշխող դասակարգերը ավելի էին հակված հարմարվել օտար տիրապետությանը՝ իրենց սեփականության արտոնությունների պահպանման և շահագործվողներին հնազանդ պահելու նկատառումներով։ Բայց անգամ այս տեսակետից հայ ավագանու և եկեղեցու ներկայացուցիչները ավելի մեծ հույսեր էին կապում ռուսական տիրապետության հետ[3]։

Սակայն ինչքան էլ մեծ լինեին այդ տարբերությունները, ռուսական օրիենտացիայի համընդհանուր բնույթը և նրա օբյեկտիվ հիմքերի առկայությունը աներկմտելի են։ Ինչպես նկատել է Ա. Ռ. Հովհաննիսյանը, բոլոր հայ գործիչները՝ անկախ նրանց դասակարգային դիրքի տարբերությունից գտնում էին, որ օտար լծից ազատված Հայաստանը պետք է ստեղծի իր պետականությունը, և որ հայկական պետությունը բոլոր դեպքերում պետք է կապված լինի Ռուսաստանի հետ[4]։

---

[1] Տե՛ս Մոսկվայի Պետ. պատմական թանգարանի ձեռագրային բաժին, Ռոզենի ֆոնդը։

[2] Մ. Նալբանդյան. Երկեր, հատ. 2, էջ 357։

[3] Վ. Ոսկանյան. Հայ ռուսական հարաբերությունները 17-րդ դարում, «Տեղեկագիր», հաս. գիտ., № 1, 1948, էջ 76։

[4] *А. Р. Иоаннисян*, Россия и армянское освободительное движение в 60-х годах XVIII столетия, Ереван, 1947, стр. 194.

Տարակարծությունների ու կասկածների առիթ է եղել հայ գյուղացիության դիրքավորումը Ռուսաստանի նկատմամբ։ Նախ պետք է ասել, որ բոլոր իշխողների կողմից խաբված, կարիքի ու խավարի մեջ խարխափող հայ աշխատավորությունը չէր կարող պարզ ու ազատ արտահայտել իր ազատագրական ձգտումները որպես որոշակի ծրագիր։

Վ. Ի. Լենինը նշում է, որ միայն սոցիալիզմի ժամանակ կարող է սկսվել իրական, իսկապես մասսայական, ժողովրդի մեծամասնության, ապա և ողջ բնակչության մասնակցությամբ կատարվող շարժում[1]։

Այնուհետև, հայ ժողովրդի, առանձնապես գյուղացիության դարավոր երազն էր ազատվել սոցիալական ու ազգային ճնշումներից, ստեղծել իր ազատ ու անկախ պետությունը։ Ռուսական օրիենտացիան հայ ժողովրդի համար ոչ թե մի օտար տիրապետությունը մյուսով փոխարինելու ծրագիր էր, այլ ազատագրական շարժման ընթացքում ռուսական պետության օգնությունն ստանալու և բարի դրացիական կապեր հաստատելու միջոց։

Պատմական դեպքերի ընթացքը ցույց տվեց, որ 17-րդ դարում ձևավորված ռուսական օրիենտացիան համաժողովրդական բնույթ ուներ ոչ միայն իր նշանակությամբ, այլև ժողովրդի սուբյեկտիվ ընկալմամբ։ 18-րդ դարի 20-ական թվականների ազատագրական շարժումները[2] ապացուցեցին, որ միակ ռեալ համաժողովրդական օրիենտացիան հանդիսանում էր ռուսականը, որն առեց և ամրապնդվեց համագործակցության ու փոխըմբռնման ծանր փորձությունների բովում։

Մ. Գ. Ներսիսյանի, Ա. Ռ. Հովհաննիսյանի և մյուս պատմաբանների աշխատությունների մեջ հանգամանորեն ցույց է տրված ռուս և հայ ականավոր գործիչների վերաբերմունքը Ռուսաստանի օգնությամբ Հայաստանը օտար լծից ազատելու հարցին և վեր է հանված փոխադարձ համակրանքի ու վստահության այն մթնոլորտը, որն ստեղծվել էր տևական քաղաքական կապերի հետևանքով[3]։

Մյուս խնդիրը ռուսական օրիենտացիայի դենեզիսի ժամանակագրական շրջանակների ճշտումն է։ Մեզ ծանոթ հրատարակված ու անտիպ նյութերը բերել են այն համոզման, որ հայ-ռուսական քաղաքական կապերը սկիզբ են առել 16—17-րդ դարերում և ձևավորվել որպես հայ ժողովրդի ազատագրական շարժման ռուսական օրիենտացիա 17-րդ դարի երկրորդ կեսում[4]։ Այս եզրակացությունը հիմնավորում են մինչև այժմ անհայտ կամ աննկատ մնացած ու անտեսված փաստեր, որոնք ժխտում են ռուսական օրիենտացիայի միայն 18-րդ դարում ստեղծվելու վերաբերյալ մինչև այժմ քաղաքացիություն վայելող դրույթը։ Այս հարցի լուծման համար կարևոր նշանակություն ունի նաև Ռուսաստանի ու

---

[1] Տե՛ս *В. И. Ленин*, Сочинения, т. 25, стр. 443.

[2] Ա. Գ. Աբրահամյան. *Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1954։ Տե՛ս նաև П. Т. Арутюнян*, Освободительное движение армянского народа в первой четверти XVIII века, Москва, 1954. *Տե՛ս նաև* Ա. Միրզոյան, *Հայ ազատագրական շարժումները Սյունիքում (1722—1730), Երևան, 1950։*

[3] Մ. Ներսիսյան. *Սուվորովը և ռուս-հայկական հարաբերությունները, Երևան), 1944։ Նույնի՝ Հայ ժողովրդի պայքարը...* և Из истории русско-армянских отношений, Книга первая, Ереван, 1956, стр. 7—116 и 179—256. *Տե՛ս նաև А. Р. Иоаннисян*, Россия и..., его же Иосиф Эмин, Ереван, 1945.

[4] *Տե՛ս* Վ. Ոսկանյան, *Նշված աշխատությունը, էջ 77։*

Պարսկաստանի սոցիալ-տնտեսական պայմանների, ինչպես և արևելյան քաղաքականության կոնկրետ պարագաների հաշվառումը։ Հիշյալ հարցերը լուսաբանել մի հոդվածում անհնարին է։ Առայժմ մենք սահմանափակվում ենք հարցի պատմության համառոտ ակնարկով, նպատակ ունենալով վեր հանել այն արգասավորը, որը նպաստել է քննվող խնդրի ուսումնասիրությանը, ինչպես և այն սխալները, որոնք մինչև այժմ դեռ լիովին չեն հաղթահարված։

* * *

Հայ-ռուս բարեկամության և պատմական կապերի հարցը մոտ երկու դար եղել է մեր հասարակական-քաղաքական մտքի ուշադրության առարկա։ Ինչպես ռուսական պետության պաշտոնական շրջանները, այնպես էլ հայ քաղաքական գործիչները, սկսած 18-րդ դարից. հաճախակի հետադարձ հայացք էին գցում հայ-ռուսական հարաբերությունների անցյալի վրա՝ իրենց վարվելակերպը հիմնավորելու և քաղաքականության նոր ծրագիր մշակելու համար։ 18—19-րդ դարերում ստեղծված գրականության և գրագրությունների մեծ մասը (սկսած Ի. Օրու ներկայացրած փաստաթղթերից մինչև Լազարյան ճեմարանի հրատարակած եռահատոր ակտերը) արդյունք են այդ զարգացող կապերի։

Դեռևս 1699 թ. հայ ավագանին, Պետրոս I-ին ուղղած իր նամակում, պատմական էքսկուրս է կատարում դեպի անցյալը և նշում, որ 1678 թվականին Էջմիածնում տեղի է ունեցել նման գաղտնի մի ժողով՝ Հայաստանի ազատագրության խնդրով Ռուսաստանին և Եվրոպայի այլ պետություններին դիմելու նպատակով[1]։

Ռուսական կայսրությունն իր հերթին հետաքրքրվում էր Հայաստանի տնտեսական ու կուլտուրական վիճակով, նրա նյութական ու ռազմական հնարավորություններով։ Այս են վկայում Պարսկաստան ուղարկված դեսպանությունները (Ի. Օրու, Ա. Վոլինսկու, Իվան Կարապետի և ուրիշների)։ Պատահական չէ, որ 1787—1791 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ Հ. Արղությանը Յաշ քաղաքում զեկուցագիր է դրում Եկատերինա II-ին այն մասին, թե ինչո՞ւ էին հայերը դիմել Պետրոս I-ին[2]։

18-րդ դարի վերջում և 19-րդ դարի սկզբում հայերի և ռուսների փոխադարձ հետաքրքրությունը ավելի է ուժեղանում։ Հանդես են գալիս մի շարք գրքեր, որոնցում նկարագրվում է Հայաստանի ժամանակակից կյանքն ու անցյալը, ընդգծվում է հայերի ռուսասիրությունն ու պատմական բախտը Ռուսաստանի հետ կապելու հաստատակամությունը։

1811 թ. հրատարակվեց Եգոր Խուբովի գիրքը՝ «Նկարագրություն Հայաստանի հիշարժան անցքերի» վերնագրով[3]։ Այդ գրքի առաջաբանում Խուբովը գրում է. «Ոչ թե ինչ որ փառասիրությամբ, այլ հայրենիքի նկատմամբ սիրով առաջնորդվելով միայն ես կազմեցի նորագույն ժամանակներում պարսիկների կողմից Երևանին պատճառած ավարառությունների ու ավերածությունների այս նկարագիրը»[4]։

---

[1] *Г. А. Эзов*, Сношения Петра Великого с армянским народом, стр. 17—27, СПБ, 1898. *Հետագայում* „Эзов".

[2] „Заметки о побудительных причинах посольства в Россию карабахских владетельных армянских князей" („Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа", т. II, Москва, 1838, стр. 52—63. *Հետագայում* „Собрание актов...").

[3] *Е. Хубов*. Описание достопамятных произшествий в Армении, 1799—1809 гг. СПБ, 1811.

[4] *Նույն տեղում։*

Երկու տարուց հետո, 1813 թ. Արտեմի Բոգդանովը՝ Արտեմի Արարատյանը հրատարակում է իր հետաքրքիր գիրքը[1] («Արտեմի Արարատյանի կյանքը»), որի էջերում պարզ արտահայտում է հայ-ռուս բարեկամության ամրապնդման պրոպագանդայի իր միտումը։ «Ռուս թագավորությունը,— գրում է հեղինակը,— միակն է, ուր ամեն մի եկվոր օտար երկրի զավակ կարող է գտնել երանելի ապաստարան և ապրել առանց սարսափի»[2]։ «...Շնորհակալություն և օրհնանք ռուսի երկրին. ես նրան հավատարիմ ու նվիրված կլինեմ մինչև գերեզման»[3]։

1826—1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի օրերին Պետերբուրգում հրատարակվեց Արզանով եղբայրների գիրքը՝ «Փորձ հայկական թագավորության պատմության ուրվագծման (Հայաստանի հիշարժան թագավորների գալերեա)»[4]։

Հետաքրքրական է, որ այս գրքում «օգոստափառ մեծ նախնիքների սրբազան շարքը» սկսվում է ոչ թե առաջին Ռոմանովից՝ Միխայիլ Ֆեոդորովիչից, այլ Ալեքսեյ Միխայլովիչից (1645—1676) ու Պետրոսից, որոնց հետ հայերը ազատագրական հույսեր են կապել դեռ Ի. Օրուց առաջ։

Առանձին հիշատակության է արժանի ռուս գրող-հրապարակախոս և պատմաբան Ս. Մ. Գլինկան, որը մեծ ծառայություններ ունի հայ-ռուսական հարաբերություններին վերաբերող նյութերի հավաքման, նախնական մշակման և մեր ժողովուրդների բարեկամության ցուցադրման ու պրոպագանդելու գործում։ Նրա մասնակցությամբ հավաքված են բազմաթիվ ու բազմերանգ նյութեր զանազան արխիվներից, ակտերի ու օրենքների ժողովածուներից, օտար և հայրենի գրականությունից, կազմված են մինչև այժմ իրենց նշանակությունը չկորցրած հատորներ[5]։ Այդ ժողովածուն փայլուն ապացույց է հայերի դարավոր ու անխախտ բարեկամության՝ ռուս ժողովրդի հետ։

Գլինկան 1831 թ. հրատարակել է «Ադրբեջանի հայերի գաղթը դեպի Ռուսաստան»[6] գրքույկը, որում ակնառու փաստերով ցույց է տրված հայերի անվերապահ նվիրվածությունը Ռուսաստանին, նրանց ռուսական օրիենտացիան։ Պարսկաստանի իշխանության տակ մնացած գյուղերից արտագաղթող հայ բնակիչները միաբերան ասում էին, թե իրենք ոչ մի զրկանքի առաջ կանգ չեն առնի՝ Ռուսաստան գաղթելու համար և «ավելի շուտ կհամաձայնվեն ուտել ռուսական խոտը, քան պարսկական հացը»[7]։

«Հայ ժողովրդի պատմության տեսություն»[8] աշխատության մեջ Գլինկան շարադրում է հայոց պատմությունը, աշխատելով Հայաստանի գունազարդված ու իդեալականացված անցյալին հակադրել ծանր ու դշխեմ ներկան, կարեկցության ու հարգանքի զգացմունք ստեղծելով հայ ժողովրդի նկատմամբ։ Սակայն չի կարելի չնշել, որ ջերմ հայրենասիրությամբ ու բարեկամությամբ հա-

---

[1] „Жизнь Артемия Араратского". СПБ, 1813, т. I и II.

[2] Նույն տեղում, հատոր II, էջ 26։

[3] Նույն տեղում, էջ 245։

[4] *Я. и Д. Арзановы*, Опыт начертания истории царства армянского, Галерея достопамятных царей Армении, СПБ, 1827.

[5] „Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа". т. I, II и III, Москва, 1832—1838.

[6] *С. Глинка*, Описание переселения армян аддербиджанских в пределы России, М., 1831.

[7] Նույն տեղում, էջ 80։

[8] *С. Глинка*, Обозрение истории армянского народа, т. I и II, М., 1832.

դեցված այդ երկերը դրված են կղերա-ֆեոդալական ու պաշտոնական պատմագրության տրադիցիաներով և միապետության գովերգության ոգով։

Երինկան, ինչպես և նրա նախորդներն ու ժամանակակիցները, ի վիճակի չէին օգտագործել բավարար քանակի ու բազմակողմանի արխիվային նյութեր, առավել ևս՝ գիտական վերլուծության ենթարկել դրանք, բացահայտելով հայերի ռուսական օրիենտացիայի սոցիալ-տնտեսական ու քաղաքական մոտիվները։ Սակայն իրենց բոլոր թերություններով հանդերձ, հիշված աշխատությունները որոշ խթան ու հիմք դարձան հայ-ռուսական հարաբերությունների՝ որպես պատմագիտական պրոբլեմի, առաջ քաշման համար։

Ռուսական պատմագրությունը 19-րդ դարի երկրորդ կեսում զգալի քայլեր կատարեց ռուս-կովկասյան հարաբերությունների ուսումնասիրության ուղղությամբ։ Առաջադիմական պատմագրության խոշորագույն ներկայացուցիչ Սոլովյովը բավական փաստական նյութ բարձրացրեց մեզ հետաքրքրող շրջանի վերաբերյալ՝ ստեղծելով այն կարևոր ֆոնը, որի վրա զարգացել էին դեպքերը։

Հասկանալի պատճառներով Սոլովյովը չէր կարող շատ մեծ տեղ տալ մեզ հետաքրքրող հարցերին, բայց պետք է նշել, որ նա առաջինը վեր հանեց Ի. Օրուն և Մինաս վարդապետին, որպես քաղաքական գործիչների։ Փայլուն գիտենալով ռուսական աղբյուրները, սրատես աչքով զննելով և գնահատելով դեպքերն ու դեմքերը, Սոլովյովը փաստորեն սկիզբ դրեց Ռուսաստանի օգնության հետ կապված հայ ազատագրական շարժման ուսումնասիրությանը։ Բայց պետք է խոստովանվել նաև, որ Սոլովյովը ստեղծեց մի կանխակալ կարծիք, մի կոնցեպցիա, որից մինչև այժմ էլ մեր գիտությունը լիովին չի ազատագրված։ Սոլովյովի ստեղծած սխեման հետևյալ կերպ է ձևակերպված. «Պարսկաստանում Ռուսաստանի կողմից գրաված դիրքերի պահպանման լավագույն միջոցը Պետրոսը համարում էր տեղի քրիստոնյա բնակչության ուժեղացումը և մահմեդականության նվազեցումը (?)։ Մենք տեսանք,— շարունակում է Սոլովյովը,— կայսրը ուղղակի մատնանշում է հայերին։ 17-րդ դարում այդ ժողովրդի և Ռուսաստանի միջև տեղի էին ունենում հարաբերություններ զուտ առևտրական գործերի կապակցությամբ։ 18-րդ դարի սկզբից ծավալվեցին այլ կարգի հարաբերություններ»[1]։

Սոլովյովի այն պնդումը, թե մինչև 18-րդ դարը հայ-ռուսական կապերը եղել են զուտ առևտրական, հետագայում կրկնեցին շատ ուրիշները և մասնավորապես Երիցյանը, որի կարծիքով ևս Ռուսաստանի հետ քաղաքական հարաբերությունները սկսվում են միայն 18-րդ դարից[2]։

Այս դրույթը դարձավ մի տեսակ աքսիոմա (որը մինչև վերջերս չեր հերքվել), որից ելնելով Կ. Եզյանը իր մեծ և ուշագրավ ժողովածուն կազմելիս հավաքել ու վերցրել է միայն այն նյութերը, որոնք մոսկովյան դիվան են մտել 1701 թվականից, երբ Ռուսաստան է գնում Ի. Օրին, իր հետ տանելով դեռևս 1699 թվականին ավագանու կազմած դիմումը։

Բայց, իհարկե, մենք չպետք է խստապահանջ լինենք Եզյանի նկատմամբ, առավել ևս նկատի ունենալով այն հսկայական գործը, որ կատարել է նա, իր առաջ դնելով միայն մեկ խնդիր — ցույց տալ Պետրոս Մեծի կապերը հայ ժողովրդի հետ։ Եզյանը լիովին հասել է իր նպատակին՝ գիտական շրջանառու-

[1] Соловьев, История России с древнейших времен, книга IV, стлб. 684–685. издания „Об. пользы".

[2] Ա. Երիցյան. Հայերի մասնակցությունը Ռուսաստանի Անդրկովկասում արած տիրապետության մեջ, «Փորձ», № 1, 1877—1878, էջ 367։

թյան մեջ գնելով այդ հարցին վերաբերող նյութերի մինչև այժմ չգերազանցված մի կոլեկցիա։ Սակայն հարկ չկա նաև գերագնահատել Եղյանի կատարածը, անտեսել նրա ժողովածուի և դրան կցվող ներածության թերություններն ու սխալները և կամ հեղինակին վերագրել Ի. Օրուն հայտնագործելու «փառքը», ինչպես այդ փորձել են անել նրա մի քանի ժամանակակիցներ, անտեսելով Սոլովյովի, Բանտիշ-Կամենսկու և մյուս ռուս պատմաբանների ծառայությունները։

Հարկ չենք համարում մանրամասն խոսել Եղյանի սխալների մասին, անհրաժեշտ է անդրադառնալ միայն այն դրույթներին, որոնք մոլորությունների և թյուրիմացությունների պատճառ են դարձել։ Այսպես, Եղյանը անչափ գերագնահատում է հայ եկեղեցու ու եկեղեցականների, ինչպես և ռուս պաշտոնական շրջանների դերը։ Նշելով, որ Պետրոս I-ը «24 տարիների ընթացքում չթուլացող ուշադրություն էր նվիրում հայերին պարսկական լծից ազատագրելու գործին», Եղյանը չափազանցնում է Պետրոս I-ի հայասիրության բարոյական կողմը։ Այդ երևում է հետևյալ քաղվածքից. «Պետրոս Մեծը Արևելքում հետապնդում էր ոչ միայն քաղաքական ու առևտրա-արդյունաբերական, այլև կուլտուրական-բարոյական նպատակներ. նա առաջինը հասկացավ Ռուսաստանի բարձր կոչումը՝ ազատել մուսուլմանների մոտ ճնշված ու ստրկացված քրիստոնյա ժողովուրդներին, և առաջինն էր, որ գնահատեց այն օգուտներն ու առավելությունները, որոնք բխում էին քրիստոնեական ժողովուրդներին Ռուսաստանին միացնող բարոյական կապերից»[1]։ Ինչպես դժվար չէ հասկանալ, Եղյանը կրոնական մոտիվներին տալիս է վճռական նշանակություն և իդեալականացնում Պետրոսի մարդասիրական ու կրոնական զգացմունքները։

Ի տարբերություն այլ պատմաբանների, Եղյանը ճշտորեն փորձում է ցույց տալ, որ Ռուսաստանը իր քաղաքականության մեջ ղեկավարվում էր ոչ միայն տնտեսական ու ռազմական նկատառումներով, այլև որոշ բարոյական մոտիվներով, որոնք այս կամ այն կերպ արտահայտվում էին նրա ռազմա-քաղաքական ծրագրերում։ Բայց Եղյանը նույնացրել է Պետրոսի քաղաքականության էությունը դրա կրոնական ու բարոյական վերնաշենքի հետ։ Ըստ նրա կարծիքի, ոչ թե շահադիտական նպատակը, ոչ թե բացառապես էգոիստական նկատառումներն էին ղեկավարում Պետրոսին, այլ «գլխավորապես պետական խնդիրները, քրիստոնեական զգացմունքը, մարդասիրական շարժառիթները և բարձր կուլտուրական նպատակները. նրա խոստումները իզուր հուսադրություններ չէին, ինչպես այդ եղավ նրա մերձավոր հաջորդների օրոք. դրանք անկեղծ էին...»[2],— հավատացնում է Եղյանը։

Ճիշտ է, նշելով, որ Պետրոսը ղեկավարվում էր «գլխավորապես պետական խնդիրներով», Եղյանը կարծես թե առաջին պլանի վրա է քաշում նրա դասակարգային-ռազմական ու տնտեսական նպատակները, բայց նա այնքան է մեծացնում բարոյական մոտիվների դերը, որ հարցը սխալ լուծում է ստանում։

Նույնպիսի միակողմանի մոտեցում է ցուցաբերում նա հայերի ազատագրական ձգտումների պատճառները որոնելիս. «...հայերը աներեր նվիրված մնացին Քրիստոսի եկեղեցուն և ամեն ինչ զոհաբերեցին՝ նույնիսկ թողեցին հայրենիքը, միայն թե պահպանեին իրենց հայրերի հավատը։ Հավատի համար մարտիրոսությունը կազմում է հայերի հասարակական կյանքի տարբերիչ

[1] Эзов..., стр. II.
[2] Նույն տեղում, էջ LXXIV։

գիծը, սկզբնական ժամանակներից մինչև այժմ, և բանալի է հանդիսանում բացատրելու հայկական բնակչության կենցաղի շատ երևույթների և նրա վերաբերմունքի՝ իշխանության ու շրջապատող ժողովուրդների նկատմամբ»[1]։

Հայերը, ինչպես հայտնի է, թողնում են իրենց հայրենիքը ոչ թե իրենց հավատի, այլ իրենց կյանքի, պատվի և սեփականության փրկության համար։ Հավատի դերը միայն կարող էր լինել երկրորդական։ Եղյանին լավ հայտնի էին հայերի, ռուսների ու այլ եվրոպացիների միջև եղած կրոնական հակամարտությունները, ինչպես և այն, որ երկիրը թողած հայերի զգալի զանգվածներ ստիպված էին ընդունել կաթոլիկությունը կամ հունադավանությունը, մինչդեռ Լեկրում մնացածների ճնշող մեծամասնությունը պահեց լուսավորչականությունը։ Հայտնի է նաև, թե ինչքան խոշոր հարվածներ հասցրին հայերին և հայ ազատագրական շարժմանը կրոնական երկպառակությունները։ Եղյանը ուղղակի չէր տեսնում կամ չէր ուզում տեսնել Իսրայել Օրու ու նրա քաղաքական ծրագիրը ծնող սոցիալ-տնտեսական ու քաղաքական մոտիվները, գերագնահատում մելիքների և եկեղեցականների դերը, հակառակ փաստերի, կատարելով անհիմն ընդհանրացում, որ իբր ամենածանր ժամանակներում հայ եկեղեցու թեմակալները չէին դադարում հոգալ իրենց հոտի բարոյական ու նյութական շահերի մասին։ Կաթողիկոսների կողքին դնելով միայն մելիքներին, Եղյանը նրանց ներկայացնում է որպես ժողովրդի իսկական առաջնորդներ, նրանց վերագրելով դասային սրբագործված արժանիքներ ու առաքինություններ, որոնք իբր թե անցել են սերնդից սերունդ՝ ժառանգաբար ու ապրել դարեր։ Այսպես, մեր հեղինակը Օրու հայրենասիրությունը բացատրում է 5—6 դար առաջ ապրած Պռոշյանների իշխանական տոհմին վերագրվող մարտիրոսությամբ. «Պռոշյան տոհմի ընտանեկան տրադիցիաները,— գրում է նա,— լիովին բացատրում են Օրու բնավորությունն ու գործունեությունը, որ, ինչպես դրել էին մելիքները «ամեն բանում հետևում է» իր «պայծառափայլագույն տոհմին»[2]։

Մելիքները և Օրին, հասկանալի պատճառներով (դեսպանությունն ավելի հեղինակավոր ներկայացնելու համար), պետք է շեշտեին այդ հանգամանքը։ Այդ պարզ է։ Սակայն Եղյանը ոչ մի հիմք չուներ Իսրայել Օրու հայրենասիրությունը ժառանգական հատկություն դարձնելու և նախնիներին վերաբերվող բարեմասնություններով բացատրելու նրա և՛ բնավորությունը, և՛ գործունեությունը։

Եղյանի մյուս բավական ընդօրինակված մոլորությունն այն է, որ իբր Հռոմի պապին և Եվրոպայի տերություններին դիմելու միտքը հայերին ներշնչել են կաթոլիկ միսիոներները, նպատակ ունենալով տարածել Հռոմի ազդեցությունն ու հավատը[3]։ Այսպիսով, Եվրոպայից օգնություն հայցելու պատմականորեն հասկանալի և օրինաչափ ձգտումը բացատրվել է որպես խաբեության, թյուրիմացության կամ գործիչների տհաստության հետևանք։ Հայ իշխող դասերը՝ ողջ աշխարհի հետ կապված հոգևորականությունն ու վաճառականությունը, հաճախ դիտվել են որպես հավկուրով տառապող անփորձ մանիակների հետևորդներ։ Հայերը իրավամբ հույսեր էին կապում Եվրոպայում ստեղծվող հակաթուրքական կոալիցիաների հետ։ Եթե Եվրոպական պետությունները հայերին չօգնեցին, ապա այդ բացատրվում է ոչ այնքան նրանց անկարողու-

[1] Эзов…, էջ X։
[2] Նույն տեղում, էջ LXXV։
[3] Նույն տեղում, էջ XIX։

թյամբ, որքան անբարյացակամությամբ, դրանց շահերի հակամարտությամբ և Ռուսաստանի դիրքերը թուլացնելու ցանկությամբ։ Բայց եղել են պատմական այնպիսի իրադրություններ, երբ եվրոպական պետությունների օբյեկտիվ վիճակն էլ պահանջել է օգնել Անդրկովկասի ժողովուրդներին՝ թուրքական ու պարսկական տիրողների դեմ։ Այդպիսի սիտուացիաները զգալիորեն նպաստել են Թուրքիայի ագրեսիայի և նրա տիրապետության թուլացմանը, ինչպես և մի քանի ժողովուրդների ազատագրմանը։ Եթե այդ պայքարը վճռական նշանակություն չունեցավ հայության համար, ապա այդ այնուամենայնիվ հիմք չի տալիս հերքելու եվրոպական կոալիցիաների օգնությանը դիմելու անհրաժեշտությունն ու հնարավորությունը։

Ամփոփելով մեր ասելիքը Եղյանի ժառանգության մասին, անհրաժեշտ ենք համարում նշել, որ նրա պատմահայեցողությունն ու դասակարգային դիրքավորումը հասկանալի կերպով պետք է պատճառ դառնային լուրջ աղավաղումների ու սխալ կոնցեպցիաների, որոնց հերքումն ու քննադատությունը պատմաբանների պարտականությունն է։ Բայց այդ բոլորը հիմք չեն տալիս անտեսել կամ թերագնահատել այն մեծ աշխատանքը, որը կատարել է Եղյանը։ Նա հայ առաջին հեղինակն էր, որը հանգամանորեն վեր հանեց Ռուսաստանի հետ հայերի քաղաքական կապերի սկզբնավորման պատմությունը, հավաքեց մեծարժեք նյութեր, կազմեց ժողովածու և գրեց մեծ ու բովանդակալից ներածական։ Այս ժողովածուն ռեալ հնարավորություն ընձեռեց վերանայել և քննադատորեն վերագնահատել արևմտա-եվրոպական աղբյուրների միտումնավոր «վկայություններն» ու «տեղեկությունները» և գրականության մեջ տեղ գտած Օրու համար վարկաբեկիչ դատողությունները՝ բարձրացնելով հայ ազատագրական մտքի և ռուսական օրիենտացիայի առաջամարտիկներից մեկի՝ Իսրայել Օրու դերը[1]։

Եղյանի հրատարակած ժողովածուն և նրանում արծարծվող խնդիրները 19-րդ դարի վերջից դարձան իրարամերժ տարակարծությունների և վեճերի առարկա։

Արդեն 1899 թ., ժողովածուի հրատարակությունից մի տարի չանցած, «Լումայի» № 1-ում (էջ 229—263) հրատարակվեց Ն. Քարամյանի մեծածավալ դրախոսությունը, որտեղ վերարտադրվում է նյութերի բովանդակությունը և գնահատվում ժողովածուն։ Քարամյանը նշում է, որ «մինչև այժմ Օրիի մասին միայն առասպելներ ու զրպարտություններ էին հայտնի», որ այդ մեծ գործչի «անունն անգամ չենք գտնում Չամչյանի նոահատոր պատմության մեջ» և որ Օրու պատվի ու պատմության վերականգնման համար մենք պարտական ենք Եղյանին։ Գրախոսողը ամեն բանում համաձայնվում ու կրկնում է հեղինակին։ Սակայն նա առաջ է քաշում հակասական թեզ. «Իրավ է, որ Օրիի ձեռնարկությունը ավարտվում է իրրև մի բախտախնդրություն (??),— գրում է նա,— բայց նրա սկսածը գլուխ է հանվում նույն միջոցներով և նույն ճանապարհներով, որ Օրին ծրագրել էր մի դար առաջ»[2]։ Հասկանալի չէ, թե ինչո՞ւ է Օրու ձեռնարկությունը վերջանում իրրև բախտախնդրություն, նամանավանդ եթե նրա ծրագիրը հետագայում «կատարվում է նույն միջոցներով և նույն ճանապարհով»։

Քարամյանը սխալ կերպով պնդում է նաև, որ հայերը Ռուսաստանից

[1] A. Iohannissjan, 'sra'l Ory und die armenische Befreiungsidee. München, 1914.
[2] «Լումա», № 1, 1899, էջ 248։

«բացի հուսադրությունից, ոչինչ չէին ստանում մինչև մեռավ մեծն կայսրը» (էջ 259)։ Մեր այս հեղինակը ևս փորձում է Օրուն «ազնվականացնել», անջատել վաճառական դասից, որպեսզի կղերա-ֆեոդալական պատմագրության ողուն համեմատ ազատագրական շարժման ղեկավարի դերում միշտ երևան միայն հոգևոր և աշխարհիկ ֆեոդալները։

Պատմագրության մեջ տեղ է գտել նաև Եղիշե Գեղամյանցի «Ի. Օրին և իր քաղաքական ծրագիրը»[1] դրքույկը, որի մասին կարելի էր չխոսել, եթե Օրու հայրենասիրության անճաշակ գովաբանությունից և հակագիտական հերյուրանքներից բացի այնտեղ չլիներ նացիոնալիզմի թույնը, որի չեզոքացումը շատ կարևոր է։ Նախ ասենք, որ Ե. Գեղամյանցը նույնպես Օրու պատրիոտիզմի սաղմերը փնտրում է «ազնվական» արյան մեջ։ Նա պնդում է, որ լինելով Պռոշ իշխանի շառավիղը, Օրին իր երակներում ուներ նույն արյունը, ինչ հավատի ու ազգության համար մարտիրոսացած նրա նախորդները[2]։ Սրանով է Գեղամյանցը «բացատրում» Օրու գործունեության մոտիվները։

Այս ենթադրությունը,— գրում է նա,— «հաստատվում է» նրանով, որ Օրին Եվրոպայում... մտնում է գինվորական ծառայության[3]. նման դատողությունները Գեղամյանցին հասցնում են բիոլոգիական իդեալիզմի Հերկուլեսյան բարույուներին։

Ազատագրական շարժման առաջնորդի և զորավարի հատկությունները հայտարարելով Ի. Օրու բնածին ու ժառանգված գծեր, Գեղամյանցը ինքնագոհ հարցնում է. Ինչո՞ւ այս բոլորից հետո նա չպետք է դառնար Հայաստանի թագավոր, երբ նա ժառանգն էր այն Իսրայելի, որը ուներ մելիքի կոչում, զորք և հպատակներ[4]։

Բայց Գեղամյանցը գտնում է, որ Օրու ծրագիրն անիրականանալի էր,— և ինչո՞ւ, որովհետև այն իբր թե գալիս էր կաթոլիկ միսիոներներից և չէր քաջալերվում հայության և ոչ մի դասի կողմից, դա ավանտյուրա էր՝ էլի Օրու բախտախնդրությունը, մի մարդու, որն իբր թե թղթաշեն իր տնակը կազմում էր եվրոպական թագավորներից ու գինվորներից։

Սակայն, Գեղամյանցը «ներում է» Օրու «սխալները», քանի որ նրա հետնորդները ավելի խոշոր սխալներ էին անում։ Անցնելով հերյուրանքների նորանոր փորձերի, նա պնդում է, որ Պետրոսի արշավանքի ժամանակ հայերը իբր չեն ուզեցել ընդառաջել նրան և միայն այն ժամանակ են հանել 10.000 զինվոր, երբ հանդես է եկել «հայ հոգևորականությունը որպես գլխավոր գործիչ»[5]։

Ըստ մեր հեղինակի «հեղինակավոր» կարծիքի, բացի հոգևորականությունից բոլոր դասերը պասսիվ էին, իսկ հայ վաճառականությունը շատ գոհ էր պարսկական կառավարությունից, նա ինքն էր հրավիրել Շահ Աբբասին և չէր սխալվել, քանի որ նրա ձեռքի տակ հանգիստ էր, հաջողակ և ցանկություն չուներ ապստամբել կամ նույնիսկ բաց անել իր փողապարկերը[6]։ Հետո Գեղամյանցը դառնում է Օրու «կեղծած» դոկումենտներին (ցարին խաբելու համար) և ...հավատացնում է, որ Պետրոսը Օրիով չզբաղվեց և «ռադ արավ

---

[1] Ե. Գեղամյանց, Իսրայել Օրին և իր քաղաքական ծրագիրը, Բաքու, 1914։
[2] Նույն տեղում, էջ 34։
[3] Նույն տեղում։
[4] Տե՛ս նույն տեղում, էջ 34։
[5] Տե՛ս նույն տեղում, էջ 52։
[6] Տե՛ս նույն տեղում։

իր գլխից» (էջ 58)։ Բարեբախտաբար Գեղամյանցը չի ցուցարերում և ոչ մի հետևողականություն, դրանով իսկ ցրելով ամեն մի կասկած՝ նրա մոտ ինչ-որ փաստերի կամ տրամաբանության առկայության մասին։

Արդյոք Գեղամյանցի բացարձակ անտեղյակության մասին չի խոսում նրա այն հայտնագործությունը, որ հայկական կոմպանիան կազմակերպված էր Ռուսաստանում (էջ 60), որ ցարին գահը ձրի նվեր են ուղարկել, որ Օրու՝ Ռուսաստան գնալու ժամանակ Շվեդական պատերազմը իր ավարտին էր մոտենում և այլն և այլն։ Բարեբախտաբար գեղամյանցները չէին. որ պիտի ներկայացնեին հայ մինչմարքսյան պատմագրության դեմքը։ Ինչպես տեսանք ու կտեսնենք, այս հարցով զբաղվել են լուրջ պատմաբաններ։ Փաստերի ու անցքերի այնքան խայտարղետ ու հակասական բացատրություններն անխուսափելի էին, քանի որ դրանք արտահայտում էին տարբեր հասարակական շերտերի հակամարտ շահերը։ Մինչմարքսյան «սոցիոլոգիան» և պատմագրությունը,—գրում է Լենինը,—լավագույն դեպքում տալիս էին անկապորեն հավաքված անմշակ փաստեր և պատմական պրոցեսի առանձին կողմերի նկարագրությունը։ Բարեխիղճ պատմաբանները այնուամենայնիվ կարողանում էին ղգալիորեն մոտենալ ճշմարտությանը, հավաքել ու մեկնաբանել փաստերը։ Պետք է ասել, որ 20-րդ դարի սկզբին այս ուղղությամբ քայլեր կատարվեցին։ Բացի Եղյանից ռուսական օրիենտացիայի ծագման հարցին անդրադարձան Լեոն և մի շարք այլ գիտնականներ։

XX դարի երկրորդ տասնամյակում ղգալիորեն աճեց Ի. Օրու և ռուսական կողմնորոշման հարցի նկատմամբ գիտական ու քաղաքական հետաքրքրությունը, որին առիթ տվին Աստրախանի հայերը։ 1912 թ. մայիսի 6-ի համարում Աստրախանում հրատարակվող «Մեր կյանքը» շաբաթաթերթը գրում էր. «Մաղալու մարդիկ են աստրախանցիները. հինգ ամիս է ծխական ժողովը ընտրել է մի մասնաժողով Իսրայել Օրու հիշատակը հավերժացնելու համար։ Երկու ամիս է այդ մասնաժողովի ղեկուցումը ծխական ժողով է բերված։ Եվ, սակայն, բանից դուրս է գալիս, որ աստրախանցիները դեռևս չգիտեն թե ով է այն Օրին, որը անմտություն է ունեցել Աստրախանում մեռնելու...։

Գիտե՞ արդյոք գոնե մասնաժողովը (չորս փարաջավոր և երեք անփարաջա), թե ով էր Օրին։ Ձեկուցման մեջ ոչինչ չէր ասված»[2]։

Երկու ամիս չանցած «Մեր կյանքը» թերթն սկսեց տպագրել Թոմասի ծավալուն հոդվածը (17—21 համարներում, երկուական պադվալ ծավալով), որը գրված է ինտերնացիոնալիստական դիրքերից, թեպետ ազատ չէ նիհիլիզմից և սխեմատիզմից։

Թոմասը գրում է. «Դեռ մի երկու տասնյակ տարի առաջ մենք փրկության մի միամիտ ու միակողմանի ճանապարհ գիտեինք՝ օտարի օգնությամբ հայրենիքի անկախություն ու ազատություն ձեռք բերել։ Շատ էլ նշանակություն չուներ մեր աչքում այն վճռողական հանգամանքը, որ վաղուց արդեն զուտ հայկական անխառն հայրենիք չկա, այլ գոյություն ունի զանազան ազգություններից, կրոններից ու լեզուներից կազմված մի խառնուրդ, որ հրամայո-

---

[1] Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 21, էջ 57։

[2] «Մեր կյանքը», № 17—21, 1912։ Դեռևս 1912 թ. № 11-ում գրված է, որ որոշված է եղել Օրու հիշատակը հավերժացնելու համար տպել նրա կենսագրությունը, նրա գերեզմանի վրա դնել կոթող, կազմակերպել հանդես և այլն։

զարար թելադրում է մեզ ընդունել մի հայրենիք, ուր թագավորեր մի համերաշխ կյանք, առանց կրոնի, լեզվի ու ազգության խտրության, բոլորովին նման զվիցերիականին։ Անկասկած է, որ այժմ թե մեր և մեր դրացի ազգերի ինտելիգենտների մի որոշ մասը՝ արդեն ազգերի անխտրության, համերաշխ կյանքի ու հայրենիքի գաղափար է դավանում, մի հայրենիք, որ յուր բախտավորության իդեալը բոլոր ազգերի ապագայի համերաշխ եղբայրակցության մեջ է փնտրում։ Կրոնների, ազգությունների, հայրենիքի այս նորագույն համամարդկային տեսակետը միանգամայն տակնուվրա է անում մեր ամբողջ անցյալ պատմության գնահատման եղանակը և իմիջիայլոց Իսրայել Օրիի պատմությունն ու գործունեությունն էլ նոր հայացքի անկյունաչափով է դնում մեր տեսության առաջ։ Մի երկու տասնյակ տարի առաջ Իսրայել Օրիի կամ նրա գործունեությունը մեր մեջ ընդունակ էր հայրենասիրական բուռն կայծեր ու հրդեհներ առաջացնել, այժմ, երկար ու ձիգ փորձերից հետո, այլև պատմասոցիալական ճշմարտությունների նորագույն հայեցողության թելադրանքների հիման վրա, մեր մեջ ծնեցնում է միայն կասկածոտ, թերահավատ և նույնիսկ դառը հեգնական վերաբերմունք։ Վաղուց, շատ վաղուց հայերի մեջ բուն էր դրել, փոխանակ սեփական ներքին ուժի, օտարի օգնությամբ հայրենիքի ազատությունը և անկախությունը պահպանելու անպատվաբեր, սխալ ու վտանգավոր գաղափարը, բայց նորագույն ժամանակները նույնը նորից սկսում է Իսրայել Օրին, որի գործունեությունը համեմատած հայերի վերջին դարերի քաղաքական ընդհանուր կատարյալ մեռելության հետ, անկախ յուր անգործնականությունից, հայի քաղաքական մտքի արթնացման սկիզբը կարելի է համարել և այժմ միայն այդ մտքով էլ կարելի է ընդունել նրան և գնահատել։

Հայը շատ զանազան ու բազմապիսի պատճառներով կորցրել է յուր քաղաքական ազատությունն ու անկախությունը և ոչ մի Իսրայել Օրի այլևս չէր կարող, այն էլ օտարի օգնությունով, նոր նորից ձեռք բերել այդ անկախությունը։ Ամենահաջող դեպքում իսրայել օրիները պիտի նպաստեին փոխարինելու մի պետության տիրապետությունը մյուսով, որի գերազանցությունը նախընթացի վերաբերմամբ, սակայն ոչնչով դեռ ապացուցված չէր կարելի համարել»[1]։ Ակնհայտ է, որ մեր հեղինակը, սխալ մեկնաբանելով ազատագրական պայքարի նշանակությունը, պարզացնում է հարցը, հրաժարվում պատմական կոնկրետ վերլուծությունից և սխալ մեկնաբանում ազատագրական պայքարի նշանակությունը։ Սակայն պարզ է նաև, որ դա մի քայլ էր դեպի առաջ։

Անցնենք հայ խոշոր պատմաբան Լեոյի հայացքների քննարկմանը։

Լեոն իր մի շարք աշխատություններում ճիշտ ու բարձր գնահատական է տալիս հայ-ռուսական բարեկամությանը և ռուսական օրիենտացիային, միաժամանակ քննադատության ենթարկելով ցարիզմի գաղութարարությունը, ռուսիֆիկացման և ազգային ճնշման քաղաքականությունը։

Լեոյի գրչի տակ փաստերը դառնում են պերճախոս, մտահանգումները յուրահատուկ ու տպավորիչ։ Բայց նրա մոտ չկա որոշակի, հետևողական ու հիմնավորված տեսակետ հայերի մոտ ռուսական օրիենտացիայի ծագման և նշանակության հարցում։ Նա մասնագիտորեն չի զբաղվել այդ խնդրով և բավարարվել է Եղյանի ու մի քանի այլ աղբյուրների կոմենտարներով ու շարադրությամբ, և միայն դրանք դարձրել գիտական ուսումնասիրության

[1] «Մեր կյանքը», № 17։

առարկա։ Դրանով է բացատրվում այն անհետևողականությունն ու մակերեսայնությունը, որը բնութագրական է մեզ հետաքրքրող հարցի շուրջը Լեոյի գրած էջերի ու գլուխների համար։

Իր «Հայկական տպագրություն», «Հովսեփ կաթողիկոս Արղության», «Հայոց պատմություն» (հատ. 3) և «Խոջայական կապիտալ» աշխատություններում Լեոն հարյուրավոր էջեր է նվիրում հայ-ռուսական հարաբերություններին, ռուսական օրիենտացիայի ծագմանը և մասնավորապես Օրուն։ Լեոն Օրուն դիտում է Ռուսաստանի և Արևմուտքի քաղաքականության լայն ֆոնի վրա, գնահատում նրա մեծ գերը և նրան համարում ազատագրական շարժման պիոները, 17-րդ դարի վերջի և 18-րդ դարի սկզբի ամենամեծ գործիչը։ Լեոն կարծում է, որ Ռուսաստանի օգնությանը դիմելու միտքը Օրուն տվել է Լեոպոլդ կայսրը[1] (ճիշտ այնպես, ինչպես պատմում է Եզյանի հրատարակած վավերագիրը)։

Լեոն, ինչպես և Կ. Եզյանը, կարծում է, որ եթե իսպանական պատերազմը չլիներ, ապա Օրին և հայերը Ռուսաստանին չէին դիմի[2]։ Այսպիսով, օրիենտացիան դիտվում է որպես պատահական՝ ժամանակավոր հանգամանքներով պայմանավորված քաղաքական ծրագիր։

Դրա հետ մեկտեղ Լեոն փորձում է գտնել հայ-ռուսական քաղաքական հարաբերությունների ենթահողը և կարծեք թե մոտենում է հարցին, նկատելով, որ «Աղով բերդը թուրքերից խլելուց հետո Պետրոսն արդեն մտածում էր Աղով և Կասպից ծովերը ջրանցքով միացնելու մասին ...Ուրեմն՝ և պետք է հետաքրքրվեր այդ ծովի շուրջը ապրող ազգերով։ Արևելյան գործերի նկատմամբ թագավորն ուներ իր ծրագիրն ու դիտավորությունները, սակայն այդ բոլորը նա թողնում էր հարմար ժամանակի... Ահա այս պատճառով Պետրոսն առանձին ուշադրություն դարձրեց Օրու վրա։ Թեև այժմ չէր կարելի իրագործել նրա ծրագիրը, բայց դրանք հարկավոր էին ապագայի համար»[3]։

Լեոն չի սահմանափակվել Օրու դերի գնահատմամբ և փորձել է բացահայտել ազատագրական շարժման խմորման նշանակությունը նման գործչի ստեղծման համար։

17-րդ դարի վերջում, ըստ Լեոյի կարծիքի, «այնքան զգալի է նահատակ ազգի բարոյական վերածնությունը, որ նույնիսկ առաջ է դալիս քաղաքական ազատության տենչանքը։ Իսրայել Օրին երևում է Հայաստանի արևելյան մասում և ծրագրում է ապստամբական շարժում պարսիկների դեմ։ Նա առաջին հայ քաղաքագետն է»[4]։

Այնուհետև, Լեոն կարծես հասնում է այն մտքին, որ Օրու մահը չէր կարող վերջ դնել Ռուսաստանին դիմելու և նրա օգնությամբ ազատագրվելու ձգտմանը, և որ Պետրոս I ուզում է օգնել, բայց հարկադրված է լինում հրաժարվել և ժամանակավորապես հետաձգել օգնությունը։

Լեոն նշում է, որ «Իսրայել Օրին երկար կյանք չտեսավ, որպեսզի կարողանար իր ծրագրի գոնե մի մասը իրագործել։ Բայց նրա սկսած գործը չմոռացվեց և սուրբ ավանդի պես պահվեց արևելյան հայերի մեջ։ 1722 թվականին

---

[1] Լեո, Հայկական տպագրություն, հատ. 2, Թիֆլիս, 1901, էջ 1—2, 223—224։
[2] Նույն տեղում, էջ 226—227։
[3] Նույն տեղում, էջ 266։
[4] Լեո. Հովսեփ կաթողիկոս Արղության, Թիֆլիս, 1902, էջ 8։

ռուսաց Պետրոս Մեծ կայսրը արշավանք սկսեց դեպի Անդրկովկաս... բայց Պետրոս Մեծը հարկադրված էր կիսատ թողնել գործը և հեռանալ Կասպից ծովի ափերից... հայերը տխրում են, բայց չեն հուսահատվում»[1]։

Ակնհայտ է, որ Լեոն տեսնում է ռուսական օրիենտացիայի, Ռուսաստանի դեպի Արևելք շարժվելու և հայերին օգնելու պատրաստակամության օբյեկտիվ հիմքի առկայությունը, թեպետ այդ չի խանգարում նրան քիչ հետո պոետական մի արտահայտությամբ մոռացության տալ իր այդ ճիշտ միտքը։ Նա մի կողմից ասում է, որ Օրու «գործը նրա հետ գերեզման չմտավ»[2], մյուս կողմից այդ գործի շարունակվելը բացատրում է միմիայն երկրորդ հերոսի՝ Մինաս վարդապետի գոյությամբ։ «Եթե չիներ նա,— գրում է Լեոն,— ազատագրական շարժումը կանհետանար հայերի մեջ իբրև մի վաղանցուկ երազ»[3]։

Այս մտահանգումը Լեոյի իդեալիզմի բազմաթիվ ապացույցներից մեկն է, գուցե ամենացայտունը։ Սակայն Լեոն իր սխալի մեջ էլ հետևողական չէ. այդ սխալը նա ուղղում է 3-րդ հատորում[4]։

Նույնքան անհետևողական է Լեոն նաև այսպես կոչված եվրոպական օրիենտացիայի փլուզման պատճառների բացատրության հարցում։ Օրու մահը «փոքր զրկանք չէր,— գրում է Լեոն,— այնուհետև այլևս եվրոպական արքունիքներում ոչ ոք չէր խոսում Պարսկաստանի լծի տակ տառապող քրիստոնյա ժողովրդի ազատագրության մասին... Հայկական հարցը կենտրոնացավ ռուսաց արքունիքում։ Մինաս վարդապետին չհաջողվեց հարաբերությունները պահպանել Եվրոպայի հետ, համակրություն գտնել այնտեղ»[5]։

Այսպիսով, ըստ Լեոյի, Մինաս վարդապետի տաղանդի պակասը պատճառ դարձավ Եվրոպայից խզվելու։ Նույն բանը Լեոն կրկնում է 1919—1921 թթ. գրած իր 3-րդ հատորում։ «Օրիի մահով հայերը զրկվում են այնպիսի մի նեցուկից, որպիսին էր Պֆալցի Կուրֆյուրստը... Օրիի մահը հեռացնում էր այդ մարդուն հայոց գործից»[6]։

«Ինչ կարող էր անել Մինաս վարդապետը,— գրում է Լեոն,— այդ այն էր, որ՝ օգտվելով իր ձեռք բերած ծանոթություններից, կշարունակեր դիմումներ անել, խնդրանքներ ուղղել բացառապես ռուս կառավարությանը, որն այսպիսով դառնում էր հայոց հարցի միակ տնօրենը»[7]։

Ինչպես ճիշտ նկատել են Լեոյի 3-րդ հատորի խմբագիրներ Բ. Հարությունյանը և Մ. Ներսիսյանը «Լեոն իր հայացքների մեջ ոչ բոլոր դեպքերում է, որ հետևողական է։ Այսպես, նա խորապես գիտակցում է այն հանգամանքը, որ 18-րդ դարում ստեղծված իրադրության մեջ հայ, ինչպես և եղբայրական վրաց ժողովրդի ազատագրության գործը սերտորեն կապված էր Ռուսաստանի հետ և միայն նրանից կարելի էր սպասել իրական օգնություն։ Սակայն, հակառակ իր այս միանգամայն ճիշտ տեսակետին, Լեոն երբեմն խիստ և միակողմանի քննադատության է ենթարկում ցարիզմի արտաքին քաղաքականությունը, մասնավորապես այն դեպքերում երբ ընդհանուր միաջղային քաղաքական բարդ

---

1 Լեո. Հովսեփ կաթողիկոս Արղության, Թիֆլիս, 1902, էջ 9—10։
2 Լեո. Հայկական տպագրություն, էջ 274։
3 Նույն տեղում, էջ 275։
4 Լեո. Հայոց պատմություն, հատ. 3-րդ, Երևան, 1946, էջ 589 և հետո։
5 Լեո. Հայկական տպագրություն, էջ 275։
6 Լեո. Հայոց պատմություն, հատ. 3, էջ 589։
7 Նույն տեղում։

իրադրությունների հետևանքով ցարական կառավարությունը ի վիճակի չի լինում իրականացնել իր քաղաքական ծրագիրը Անդրկովկասի նկատմամբ... ակտիվ օգնություն ցույց տալ հայ ժողովրդի ազատագրության գործին»[1]։

Լեոն (ինչպես և մի քանի այլ պատմաբաններ) չէր ուզում հասկանալ, որ եթե Պետրոս I 1720-ական թվականներին շարունակեր իր զորքերի շարժումը դեպի Անդրկովկասի խորքը, ապա կոնֆլիկտ կստեղծվեր Թուրքիայի թիկունքում կանգնած Անգլիայի ու Ֆրանսիայի հետ։ 21-ամյա հյուսիսային պատերազմից հետո՝ ժամանակի հետամնաց տրանսպորտի և նյութական ծայր սահմանափակ հնարավորությունների պայմաններում ոչ միայն հնարավոր չէր լինի պահպանել Կասպյան ծովափը, այլև ֆիզիկական բնաջնջման վտանգ կստեղծվեր ռուս զորքի ու հայ ժողովրդի համար։ Պետրոսը ոչ թե հրաժարվեց, այլ հետաձգեց Անդրկովկասին օգնելու գործը։ Այդ է վկայում Ռուսաստանի քաղաքականությունը հետագա տարիների ընթացքում և Պետրոս I-ի դեսպան Իվան Կարապետի գործունեությունը, որը հանգամանորեն ցույց է տրված պրոֆ. Ա. Աբրահամյանի գրքում[2]։

Չի կարելի չնշել, որ Լեոն իր 3-րդ հատորում, ինչպես և այլ աշխատություններում սուր և արդարացի քննադատության է ենթարկում եվրոպական պետությունների երկերեսանիությունը, կեղծ հուսադրությունները, գաղութային քաղաքականությունը և վաճառականական հաշիվները[3]։

Սովետական կարգերի հաստատումից հետո Լեոն ազնվորեն փորձեց հաղթահարել իդեալիստական պատմահայեցողության ազդեցությունը, կանգնել մատերիալիզմի և դասակարգային պայքարի տեսակետի վրա։ Բայց այդ նրան հաջողվեց միայն մասամբ։ Հասկանալի կերպով տուրք տալով ժամանակի իշխող սխալ կոնցեպցիաներին, Լեոն ընկավ մյուս ծայրահեղության մեջ, հերքեց ռուսական օրիենտացիայի գոյությունն ու նշանակությունը, Օրու ծրագիրը հայտարարեց բախտախնդրություն։ Կրկնելով անցյալում գրականության մեջ արտահայտված սխալ կարծիքները, Լեոն Օրուն համարում է Հայաստանի ու Ռուսաստանի դրությունից անտեղյակ մի կեղծարար։

Այսպես, Լեոն կարծում է, որ Ի. Օրին չգիտեր, թե Պետրոսը, «ցար» է և ոչ «մեծ դուքս»! (Բայց հայտնի է, որ ցարի տիտղոսն սկսվում էր այսպես. Царь, Государь и великий князь — այսինքն «մեծ դուքս»[4] կամ իշխան։

Լեոն գոհունակությամբ նշում է, որ ինքը անուշադրության չի մատնել Օրու և ոչ մի գիծ, շեշտում է «բացասական հատկություններն այդ բնավորության մեջ։ Իսկ այդ տեսակ գծերն այնքան առատ են, որ, օրինակ պրոֆ. Հայգելն ուրիշ մի բացատրություն չի գտել նրանց համար, բացի այն բանից, որ Օրին պարզապես մի խաբեբա էր, իսկ Հ. Ալիշանը անվանում է նրան «բախտախնդիր»[5]։ Բայց գերմանացի պրոֆեսորին դեռ հայտնի չէին այն մերկացումները, որ արավ հայ քննադատությունը Օրու կեղծումների շուրջը, մերկացումներ, որոնք բոլորովին կերպարանափոխում են նրա կատարած դործի պատմությունը, խլելով նրանից եթե ոչ լայն ժողովրդական, գոնե որոշ դասա-

[1] Լեո. 3-րդ հատ., էջ X։

[2] Մի էջ Անդրկովկասի և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1954։

[3] Լեո. 3-րդ հատ., գլուխ 6-րդ, Խոջայական կապիտալ և այլն։

[4] Խոջայական կապիտալ, էջ 215, Երևան, 1934։

[5] Ալիշան. Միսական, էջ 212 (մեջբերումը Լեոյինն է)։

կարդային շարժման հմայքը և թողնելով լոկ անհատական ձեռնարկության արհեստականությունը միայն»[1]։

Բայց Լեոն այստեղ վերջակետ չի դնում։ «Մենք, սակայն,— գրում է,— չպետք է խորշենք ամենածանր, ամենաանողորմ դատափետություններից անպամ ու դեն դցենք այդ գործիչին, իբրև անհետաքրքրական մի իր։ Ի. Օրին է, և կմնա, ընդհակառակը, խորին ուշադրության և հետաքրքրության արժանի առարկա։ Այդ մի պատահականություն չէր, որ կյանքի ծովը հանկարծակի դուրս է շպրտում ափը՝ այդտեղ էլ անհայտացնելու համար, այլ մի մարդկային փաստադիր, չափազանց կարևոր հայ հասարակական մտքի զարգացման պատմության համար..., իբրև հայ հասարակական մի նոր կատեդորիայի անդրանիկ ձևավորում»[2]։

Լեոն Օրուն համարում է հայրենասեր, հայ խոջայական կապիտալի ծնունդ, նրա ինտելիգենցիայի առաջին ներկայացուցիչ[3]։ Այդ բոլորը, սակայն, հակասում է նախորդ ասածին։ Օրին,— գրում է Լեոն—«արդյունք էր հայ խոջայական կապիտալի, մի համաշխարհային շրջմոլիկի, որ ամիրայական կապիտալի պես փակված չէր տեղայնության մեջ իբրև միալար և միագույն անշարժություն, որ խորթ էր ամեն մի օտար սկզբունքի և ամենից շատ՝ միջազգայնության, այլ ապրում էր ազգերի և երկրների հետ շփվելով, փոխ տալով և փոխ առնելով, ամեն տեղի գունավորումներ ընդունելով, աշխարհաքաղաքացիությունն անգամ, գաղափարական հիմունքներ յուրացնելով և այսպիսով ներկայացնելով մի գույնզգույն բազմատարրություն, սկսած՝ պահպանողականությունից մինչև քաղաքական սանձարձակությունը, որի օրինակն է Օրին»[4]։ Ապա Լեոն նշում է, որ «Օրին առաջին հեղափոխական ինտելիգենտն էր հայերի մեջ», որի բարձրագույն իդեալն էր՝ ունենալ մի հայ թագավոր[5]։ Բայց Լեոն փորձում է վեր հանել Ի. Օրու անձնավորությունն ու արժանիքները. «Օրին ամբողջ գլխով բարձր էր իր հաջորդներից նրանով, որ հախուռն ապըստամբության առաքյալ չէր, ուներ շրջահայեցողություն, զգուշավորություն, գիտեր, որ հայ ժողովուրդը կարող էր սարսափելի կերպով վնասվել, մենակ մնալով դեմ առ դեմ իր թշնամիների հանդեպ, ուստի... աշխատում էր, որ հայերն իրենց ազատագրական պատերազմի մեջ դաշնակից ունենան իրենց դրացիներին։ Այստեղից՝ նրա շատ գնահատելի ջանքերը, միություն ստեղծել բախտակից վրացիների հետ, մի գաղափար, որ հետագայում, ինչպես կտեսնենք, պաշտամունքի պես մի բան դարձավ հնգկահայ կապիտալի համար։ Եվ, առհասարակ, Օրիի դործադրած քաղաքական սկզբունքների մեջ մենք չենք գտնում այնպիսիները, որոնք մեռած լինեին նրա հետ և որդեգրված չլինեին, անկախ նույնիսկ նրանց վնասակարությունից, հայ ազատագրական շարժման մեջ»[6]։ Լեոն ինքն իրեն հարց է տալիս, թե ինչ սկզբունքներ են դրանք, ինչումն է վնասակարությունը և պատասխանում՝ ...հայության ռուսական օրիենտացիան։ «Ի՞նչն էր

[1] Խոջայական կապիտալ, էջ 244։ Պետք է նշել, որ ավելի վարկաբեկիչ հերյուրանքներն Օրու հասցեին սկիզբ են առել նրա գործունեության շրջանում ու այլևայլ գունավորումներով արտահայտվել գրականության մեջ։ Օրին ըստ ծագարելու կարծիքի եղել է շվեդական լրտես։

[2] Նույն տեղում, էջ 244—245։

[3] Նույն տեղում, էջ 246։

[4] Նույն տեղում, էջ 256։

[5] Նույն տեղում, էջ 257։

[6] Նույն տեղում, էջ 258։

իսկապես Ի. Օրու քաղաքական ամբողջ ռեալ ժառանգությունը։ Մենք ասացինք արդեն։ Ռուսաց նվաճողական իմպերիալիզմը (Պետրոսի օրոք!!) հենց որ իր երեսը դարձրեց դեպի Հարավ, երես առ երես հանդիպեց հայ բազկատարած դիվանագիտության, որ Ի. Օրու բերանով ինքն իրեն ուիստում էր լինել նրա ծառան և գործիքը։ Բայց ծառայի ղերն էլ մի չափազանց մեծ դժբախտություն էր, որ այդ դիվանագիտությունը հենց իր առաջին քայլից գնում էր հայ ժողովրդի վզին»[1]։ «Այսպիսով, սկիզբ էր դրվում այն անասելի աղետավոր համբավին, որ հայ ժողովուրդն ստանում էր իրեն չորս կողմից շրջապատող մահմեդական աշխարհում և ճշմարտություն էր դառնում նաև եվրոպական դիվանագիտության համար, այն է՝ թե հայերը տանում են ռուսներին մահմեդական երկրներն Արևելքում նվաճելու համար։ Այս դշխեմ համբավը դարերով անշարժացած մնաց ժողովրդի վրա, և պատմությունը չի էլ կարող թվի ու համարի տակ գցել, թե որքան և որքան արյան գետեր են ծնվել այդ ժողովրդի գոյությունը մաշեցնելու համար հենց սոսկ միայն այդ խոսքերից՝ «հայերը բերին», «հայերը բերում են», մինչդեռ կոտորվողն ու ոչնչացողը, որ ժողովրդի զանգվածն էր, մաս չուներ բերելու մեջ, այլ այդ բանով դրաղվողը հայ կղերական դիվանագիտությունն էր, ինչպես կտեսնենք այս շարունակ»[2]։

Ինչո՞ւմն է այստեղ Լեոյի սիալը. նախ որ ռուսական օրիենտացիային անմասն չէին ժողովրդի զանգվածները, որոնց օբյեկտիվ շահերը արտահայտված են այդ ծրագրում, և ապա՝ հայերի հալածանքներն ու ջարդերը եղել են դեռ մինչև Ռուսաստանի հետ կապվելը, ու դրանք կշարունակվեին և կսաստկանային, եթե չլիներ Ռուսաստանը և նրա դարավոր պայքարը Թուրքիայի ու Պարսկաստանի դեմ։ Սխալ է կարծել նաև, որ ռուսներին «հայերն էին տանում»։ Նախ «տանում էին» նաև վրացիները՝ (դեռ Բ. Ռոդունովի ժամանակվանից) և հետո, ռուսական կառավարությունը միշտ չէ, որ հատուկ «հրավերի» էր սպասում, նա կարող էր դալ ոչ միայն առանց հրավերի, այլև հակառակ հյուրընկալողի ցանկության (ինչպես նա դնաց Լեհաստան, Ֆինլանդիա և այլն)։ Հետո, եթե Օրու ծրագիրը սխալ լիներ կամ արտահայտեր միայն կղերականության շահը, ապա այն չեր ապրի հարյուրամյակներ։ Չ՞է որ Ի. Օրին մեռավ մոռացված, չէ՞ որ Օրին ոչ ոքի չէր կարող ստիպել կենսագործել իր ծրագիրը։ Չէ որ, հենց ինքը Լեոն շատ ճիշտ կերպով նշում է, որ չպետք է կարծել, թե «Օրին այդպես կամեցավ և այդպես էլ եղավ։ Կամեցողն էլ, հրամանագրողն էլ ինքը կյանքն է իր զարգացման առանձնահատուկ պայմաններով, որոնց մեջ խոսում են հասարակական ուժերի փոխհարաբերությունները։ Չէ՞ որ ինքն Օրին էլ այդ փոխհարաբերությունների արտաբերած զարգացման մի փաստ էր»[3]։ Լեոն ճիշտ է, երբ ռուս օրիենտացիան դիտում է որպես անխուսափելի արդյունք Հայաստանի կոնկրետ պայմանների, որն ստուդվում էր դարեր շարունակ և ամրապնդվում։ Լեոն իր վերջին աշխատության մեջ էլ կարծես տեսնում է օրիենտացիայի դրական դերը, բայց չի շեշտում՝ կարծես քաշվելով «տուրք տալ» ցարիզմի դաղութային քաղաքականության դրվատմանը։

1920-ական թվականներին ստեղծված վուլդար սոցիոլոգիական դպրոցը ամեն բանում մեղադրում էր ցարական Ռուսաստանին (և միայն նրան), հրա-

[1] Խոջայական կապիտալ, էջ 258։
[2] Նույն տեղում, էջ 258—259։
[3] Նույն տեղում, էջ 259 (ընդդծումը իմն է — Վ. Ո.)։

ժարվում պատմական կոնկրետ իրադրությունն ուսումնասիրելու փորձերից և գիտական օբյեկտիվությունից։

Լեոն փորձ է անում խուսափել պատմական պրոցեսի պերսոնիֆիկացիայից և Ի. Օրու կարծեցյալ մեղրերը բարդել հայ խոջայական կապիտալի և նրա կամակատար համարված «կղերական դիվանագիտության» վրա։ Բայց այստեղ էլ նա չի կարողանում խուսափել սխեմատիզմից և սխալներից, չտեսնելով հայ բուրժուազիայի և բուրժուական կապերի պրոգրեսիվ դերը, այդ կապերի հարաբերությունը ժողովրդի հետ, բուրժուական ծրագրերի ազգային՝ համաժողովրդական նշանակությունը, «մաքուր» ժողովրդական և «մաքուր» բուրժուական ծրագրերի բացակայությունն ու դրանց անհնարինությունը 18-րդ դարի պայմաններում, երբ ազատագրական հարցը միայն համազգային հարց կարող էր լինել. (փակագծում ասենք, որ «ազգային ազատագրական շարժումը» արտահայտությունը օգտագործում ենք գիտակցորեն, քանի որ 18-րդ դարում հայ ազգի կազմավորման դարավոր պրոցեսն սկսված էր և ազատագրական շարժումն էլ արդեն ազգային էր այն չափով, ինչ չափով սկսվել և առաջ էր գնացել ազգի ծագման պրոցեսը)։

Լեոյի այս և այլ սխալները մինչև այժմ դեռ վերջնականապես հալթահարված չեն և երբեմն իրենց արտահայտությունն են գտնում աննկատելի ձևով, թեպետ այլ գունավորմամբ։ Չի կարելի չնշել նաև, որ Լեոյի մոտ արտահայտված բազմաթիվ արդյունավետ մտքերը հաճախ համարվել են սխալ ու դատապարտվել։ Ճիշտ է, Լեոն գերագնահատել է հայ վաճառականության և բուրժուական կապերի նշանակությունը, սակայն նա արդարացիորեն տեսել է այն նոր ուժերը, որ հանդես են եկել 17—18-րդ դարերում և ստեղծել «բուրժուական ինտելիգենցիայի» առաջին ներկայացուցիչներ, բուրժուական կապեր ու հարաբերություններ։

«Ի. Օրին,— գրում է Լեոն,— միայն 17-րդ դարի երկրորդ կեսից առաջացած տնտեսական զարգացման արդյունք կարող էր լինել՝ իբրև այդ զարգացումը հայտաբերող հասարակական նոր կատեգորիայի — բուրժուական ինտելիգենցիայի և մասնավորապես նրա հեղափոխական ճյուղի շատ բնորոշ և տիպիկ ցուցադրիչ։ ...Մի դար առաջ Ի. Օրի չէր կարող լինել որովհետև այն ժամանակ հայությունը մի անձուկ ճահճացած կրոնական աղանդավորություն էր միայն (??)։ Պետք է, որ հայ խոջայական կապիտալը դուրս գար Արաքսի ձախ ափի ժայռերի ծերպերում իր համար փորած մորմի բույներից, ստեղծեր Նոր Ջուղա, տարածվեր Եվրոպայի և Հնդկաստանի մեծամեծ շուկաներում, դառնար քաղաքական ուժ, մտներ միջազգային մրցակցությունների ասպարեզը, դեսպանական հանձնարարություններն իսկ մտցներ իր զբաղմունքների շրջանակի մեջ, որպեսզի այդ ձևափոխությունների մեջ մշակվեր և կյանքի մեջ երևան ելներ մի Իսրայել Օրի»[1]։

Շահ Աբբասի ռեֆորմները, բազմացող ու մեծացող քաղաքներում ծավալվող առևտուրն ու արդյունագործությունը, բուրժուական կապերի ստեղծումը Անդրկովկասում և Պարսկաստանում, միջազգային առևտրի վերելքը, հայ գաղութների աճը ու տնտեսական-քաղաքական կյանքի աշխուժացումը կարևոր ու խոշոր երևույթներ են, որոնց ազդեցությունը տեսնում էր Լեոն և փորձում

[1] Լեո. Խոջայական կապիտալ, էջ 239։

բացատրել դրանց նշանակությունը ազատագրական շարժման և Որու ռուսական ծրագրի հանդես գալու համար։

Հասկանալի է, որ աշխարհի բոլոր երկրների հետ կապված հայերը, մասնավորապես վաճառականները և նրանց գործակատարներն ու բանվորները, իրենց երկրի հետ կապված այդ հազարավոր մարդիկ միաժամանակ շփվում էին տարբեր ժողովուրդների հետ, բեղմնավորվում նոր մտքերով ու ցանկություններով, ականատես դառնում ֆեոդալական պետությունների ներսում կատարվող փլուզումներին, բուրժուական բարեփոխություններին ու ռևոլյուցիաներին, բուրժուական ազգային կյանքի զարթոնքին, նացիոնալիզմի, ազգային խտրականության և ատելության ստեղծման պրոցեսին, որը հայերին ստիպում էր համախմբվել, միավորել իրենց ուժերը. մտածել հայրենիքի ազատագրության և սեփական պետականություն ստեղծելու մասին։

Ազգային զգացմունքի զարգացման վրա վճռական ազդեցություն էր գործում Պարսկաստանի և Թուրքիայի տևական տիրապետությամբ ստեղծված ծանր վիճակը, ազգային ու ֆիզիկական ոչնչացման վտանգը, երբ պետք էր փնտրել ու գտնել այն ուժերը, որոնք շահագրգռված էին օգնել Անդրկովկասի ժողովուրդներին՝ օտար տիրապետության դեմ նրանց անհավասար պայքարում։ Հայերը պետք է ձգտեին և ձգտում էին միավորել իրենց, վրացիների, ադրբեջանցիների ուժերը, դիմեն միջազգային հարաբերություններում մեծ կշիռ ունեցող և օրըստօրէ հզորացող Ռուսաստանին, օգտագործեին իրենց կապերը աշխարհի բոլոր հայաբնակ վայրերի հետ՝ ազատագրական գործը նախապատրաստելու համար։

Ազատագրական շարժման զարթոնքին նպաստում էր նաև այն նշանակալի մտավոր շարժումը, որն սկսվել էր 17-րդ դարում։ Այդ ժամանակ է, որ ուժեղանում է հետաքրքրությունը դեպի հայ ժողովրդի պատմական անցյալը, հանդես են գալիս պատմագիտական նոր երկեր, ընդօրինակվում են բազմաթիվ ձեռագրեր, նոր թափ է առնում հրատարակչական ու դպրոցական գործը, նկատվում է աշխարհիկ լեզվի և պոեզիայի զարգացման նոր վերելք և լուսավորության սաղմերի ծնունդ։ Մեծ տեղաշարժ է նկատվում նաև աշխարհիկ նկարչության ու կերպարվեստի բնագավառում. մեծատաղանդ նկարիչներ Մինասը, Աստվածատուր (Բոդդան) Սալթանովը և նաղաշ Հովնաթանը արվեստը դուրս են բերում կրոնական խանձարուրից, եկեղեցուց ու պալատներից՝ այն մոտեցնելով աշխարհիկ կյանքի պահանջներին։

Այսպիսով, հայ ժողովրդի ազատագրական շարժումն ու նրա ռուսական օրիենտացիան հետևանք էին նոր պայմանների, սոցիալ-տնտեսական, քաղաքական ու կուլտուրական կյանքի զարգացման նոր իրադրության՝ մի կողմից և Մերձավոր Արևելքում ստեղծված միջազգային ուժերի նոր հարաբերակցության՝ մյուս կողմից։ Այս հարցերի քննությանը մենք կանդրադառնանք մի այլ հոդվածում։